



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Միխթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) կանոնադրության 55-րդ կետը, ԵՊԲՀ գիտական խորհուրդը, լսելով միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ե.Ս.Սահակյանի զեկուցումը, նոմինացիոն կոմիտեի նախագահ Ա.Ազնաուրյանի, հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ավետիսյանի, իրավաբանական բաժնի պետ Մ.Սողոմոնյանի և գիտական քարտուղար Տ.Գ.Ավագյանի հաղորդումները,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԵՊԲՀ միջազգային և արտաքին կապերի ոլորտի գործունեությունը գնահատել բավարար (զեկույցը կցվում է) (20-02-03-01):
2. Հանձնարարել պրոռեկտոր, դոցենտ Ե.Ս.Սահակյանին.
 - 1) Մշտադիտարկել և վերլուծել կրթության բնագավառի միջազգային զարգացումները, դրանց համապատասխան՝ յուրաքանչյուր տարի մինչև 2022 թվականը սահմանված կարգով մշակել և կիրառել համագործակցության և արտաքին կապերի արդյունավետ մեխանիզմներ և ժամանակացույց (20-02-03-02).
 - 2) ԵՊԲՀ-ի կողմից տրամադրվող կրթական ծառայություններում օտարերկրյա քաղաքացիների թվակազմն ավելացնելու նպատակով յուրաքանչյուր տարի մինչև 2022 թվականը սահմանված կարգով մշակել և կիրառել արդյունավետ




մեխանիզմներ ուսումնառության համար համալսարանի գրավչությունը մեծացնելու ուղղությամբ (20-02-03-03).

3) Համալսարանի Պաշտոնական կայքի «Միջազգային» դարանում, օտարերկրյա պետություններում գործող ԵՊԲՀ շրջանավարտների միությունների ինտերնետային կայքերում 2020-2022 թվականների ընթացքում ընդլայնել Համալսարանի կողմից տրամադրվող անհրաժեշտ տեղեկատվությունը, այդ թվում՝ համալսարանի 100 ամյակին նվիրված միջոցառումների վերաբերյալ: Կիրառել տեղեկատվության տրամադրման հնարավոր այլ միջոցներ (20-02-03-04).

4) Օտարերկրացիների ուսուցման դեկան, դոցենտ Գ.Ֆ.Ավետիսյանի, աշխատակազմի ղեկավարի տեղակալ Մ. Հ. Սիմոնյանի և արխիվային բաժնի պետի պաշտոնակատար Մ.Մ.Հայրապետյանի հետ համատեղ մինչև 2022 թվականի մայիս ամիսը կազմել համալսարանի շրջանավարտների վերաբերյալ տեղեկությունների գրանցամատյան (20-02-03-05):

3.Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆ. Լ.Ա.Ավետիսյանին, հետքուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր, դոց. Գ.Ա.Ավետիսյանին, միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, դոց. Ե.Ս.Սահակյանին 2020-2022 թվականների ընթացքում, յուրաքանչյուր տարվա հոկտեմբեր ամսին օտարերկրյա ուսանողների շրջանում անցկացնել գիտականորեն մշակված սոցիալական հարցումներ և արդյունքների վերաբերյալ տեղեկությունները ներակայացնել համալսարանի ռեկտորատի քննարկմանը (20-02-03-06):

4.Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆ. Լ.Ա.Ավետիսյանին, հետքուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր, դոց. Գ.Ա.Ավետիսյանին, միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, դոց. Ե.Ս.Սահակյանին օտարերկրյա համալսարանների հետ համագործակցության շրջանակում ձեռք բերել պայմանավորվածություն՝ հրավիրված դասախոսների փոխանակման գործընթացը ակտիվացնելու վերաբերյալ (20-02-03-07):



5. Հաստատել՝

1) Նոմինացիոն կոմիտեի նախագահ Ա. Ազնաուրյանի կողմից Կ. Եսայանի անվան կրթաթոշակի սահմանման առաջարկը (20-02-03-08),

2) Բժիշկների և բուժքույրերի՝ մասնագիտական և շարունակական կրթության կատարելագործման դասընթացների ուսումնական պլան-ծրագրերը (կցվում է) (20-02-03-09),

3) «Անվանական կրթաթոշակների մասին կանոնակարգի» փոփոխությունների և լրացումների նախագիծը (կցվում է) (20-02-03-10),

4) «Ուսման վճարի փոխհատուցման մասին կանոնակարգի» փոփոխությունների և լրացումների նախագիծը (կցվում է) (20-02-03-11),

5) «Ամփոփիչ ատեստավորման կանոնակարգի» փոփոխությունների և լրացումների նախագիծը (կցվում է) (20-02-03-12):

6. Հետբուհական կրթության փուլում վիրուսաբանության կուրսի ներդրման և համապատասխան լաբորատորիայի ստեղծման նպատակով հանձնարարել աշխատակազմի ղեկավար Շ. Ա. Դանիելյանին կազմել պլանի նախագիծ՝ անհրաժեշտ հաշվարկներով և ներկայացնել գիտական խորհրդի հաջորդ նիստին (20-02-03-13):

7. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը՝ վիրաբուժական ստոմատոլոգիայի և դիմաձնոտային վիրաբուժության ամբիոնի դոցենտ, ք. գ. թ. Աննա Գագիկի Խաչատրյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ որոշումը սահմանված կարգով ներկայացնելով ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը (կցվում է) (20-02-03-14):

8. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ. Գ. Ղ. ՊՐՈՖ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ. Գ. Ղ. ՊՐՈՖ. Տ. Գ. ԱՎԱԳՅԱՆ